

ՑՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 294
ՄԱՇՏՈՑ

(Հայերեն, լատիներեն և լեհերեն)

Թերթերը՝ 254։—**Պրակները՝** 38, յուրաքանչյուրը 8-ական թերթից, ի բաց առյալ հետևյալ պրակները՝ Զ՝ 6, ԺԸ՝ 7, ԼԲ՝ 5 և ԼԳ՝ 4 թերթից են։—**Մեծությունը՝** 19.5×11.8×3.5 սմ.։—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ դիմացկուն թուղթ։—**Կազմը՝** կաշեպատ ստվարաթուղթ։—**Պահպանակները՝** սկզբում և վերջում մնկական գունավոր և ծաղկավոր թուղթ։—**Վիճակը՝** լավ։—**Գրությունը՝** հայերենի դեպքում՝ միապլան, իսկ օտար լեզվի ժամանակ՝ երկսյուն։—**Դատարկ թղթերը՝** 1ա, 1բ, 2բ, 253բ, 254ա և 254բ։—**Տողերը՝** անկանոն, 28—34։—**Գծումները՝** առանց ճնշումի, աչքի չափով։—**Գիրը՝** հայերենը՝ նոտրգիր, իսկ օտար լեզուն՝ լատիներեն տառեր։—**Զարդագրությունը՝** չունի։—**Գրիչը՝** անհայտ։—**Պատվիրատուն՝** անհայտ։—**Ժամանակը՝** 1797 թ.։—**Վայրը՝** Լեռպոլիս (Լվով, նախապես Լեհաստանում, իսկ այժմ Ուկրաինայում)։—**Մանոթություն՝** Մայր Աթոռիս Ձեռագրատունը Վեհափառ Հայրապետի միջոցավ 1965 թ. հունիս ամսին ստացել է նվեր Բուխարեստից (Ռումինիա)։ Գնված է հնությունների մի խանութից 120 լեյով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թ.թ. 5ա—8ա.—Ձեռագիր մաշտոցի մասին հատարակ խրատներ։

Թ.թ. 8ա—244բ.—Մաշտոցի տեքստը։ Լրիվ գրված է հայերեն, սակայն բազմաթիվ տեղեր թարգմանված է լատիներենի, իսկ որոշ տեղեր էլ՝ լեհերենի, ինչպես օրինակի համար թ. թ. 23ա—24ա (Հաւատամ յԱստուծոյ Հայրն ամենակարողն), 25բ (Հայր մեր որ յերկինս ես) և այլն։

Թ.թ. 245ա—246ա.—Ցանկ։

Թ.թ. 246բ.—**Տաղ զՍրբոյ Հոգւոյն**

Եկ սրբարար ստեղծող հոգի
Զմիտս բոյոց աղցել արի,
Լի՛ց վերնական զեղմամբ շնորհի
Զոր դու ստեղծեր զսիրտ մաքրելի։

Մխիթարիչ կոչիս հոգի
Զիր Աստուծոյ բարձրագունի,
Հուր, սէր, աղբիւր դու կենդանի
Օծումն հոգւոյ իմանալի։

Դու եօթնարփեան պարգևօք լի
Մատրն աջոյ հայրականի,
Դու հօր խոստումն ես արժանի
Բանիւ պըճնօղ մեր կոկորդի։

Տուր զլոյս անշէջ զգայարանի
Հեղ զսէր սրտից անխախտելի,
Զտկարութիւն մերոյս մարմնի
Միշտ զօրացո՛ ընդդէմ չարի։

Վանեա՛ զոսոխն ի մէնջ հեռի
Զխաղաղութիւն տուր փութակի,

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի №№ Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից և 1972 թվականի № Ա-ից։

Լե՛ր առաջնորդ յամենայնի
Զմեզ անվրդով պահեա՛ յերկրի։

Տուր քեւ գիտել զՀայրն անծին
Եւ ճանաչել զՈրդի միածին,
Եւ յերկոցունց զբղխեալդ Հոգի
Միշտ հաւատալ լրիւ սրտի։

Հօր Աստուծոյ փառք եղիցին
Եւ յարուցեալ Որդւոյ նորին,
Եւ Սուրբ Հոգւոյն մխիթարչի
Ի յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Թ.թ. 247ա—250բ.—Լատիներեն տեքստ։
Նախ հինգ պարագրաֆներ, որոնք սկսվում են նոտակյալ տառերով՝

B F R S

այս լատիներեն տեքստը հետևյալ վերնագրերով՝

Benedictio caru: dem Literarum.
Benedictio Ignis.
Absolutio Peneralis cum plenana Indulgentia in articulo mortis.

Թ.թ. 251ա—253ա.—Մի քանի հայերեն աղոթքներ, գրված հետագայում։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 4ա.—Մաշտոց կամ Ծիսարան, ի վայելումն Եկեղեցեացն Հայոց, և յատկապէս թեմին Լէօպոլսեցւոյ, նորապէս յարմարագոյն շարադրեցեալ։
Զարարողութիւնս Խորհրդոցն Եկեղեցւոյ (բացի խորհրդոյ կարգի) որոց պաշտումն առ քահանայս պատկանի։ Նաև զերդմնեցողութիւնս և զհամայն օրհնութիւնս, որք ի Սուրբ Եկեղեցւոջ ի կիր արկանին։
Պարունակեալ։

Rituale ad Usum Ecclesiarum Ritûs Armeni, & proecipue Dioecesis Leopolitanae. Recenter accommodatius concinnatum.
Coeremonias Sacromentorum Ecclesiae (praeter Sacramentum Ordinis) quorum administratio ad Sacerdotes pertinet: Insuper Exercismos, et onnes Benedictiones, que in Ecclesia exercentur.
Continens.

Առ Եկեղեցեաւն Աթոռակալաւ յամի Տեառն 1797։
Եւ ի թուականութեան Հայոց ՌՄԽԶ։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի սկզբի պահպանակի վրա) DNM-1856.
Թ. 1ա.—Amna-S. S. Swiztey-DNM-1856.
Թ. 3ա.—Anticariat Nr. 1, Lei 120.
Թ. 4ա.—Ex libris Ecel: paroch: r. a. in Lysiec.

Թ. 4բ.—(Կա էլիպսաձև մի կնիք, 4.3×3.8 սմ. չափերով, որ անընթեռնելի է։ Հայկական Եկեղեցու կնիքն է, գրված լատիներեն)։
Թ. 83ա.—(Կա երեք տող գրություն լեհերեն լեզվով)։

№ 295

ԱՌԱԿԱՑ ԳԻՐՔ

Թերթերը՝ 116։—**Պրակները**՝ 10, յուրաքանչյուրը 12-ական թերթից, ի բաց առյալ Ա և Ժ պրակները, որոնք 10-ական թերթից են։—**Մեծությունը**՝ 16.5×11.3×3.5 սմ.։—**Նյութը**՝ դեղնած և կեղտոտված հաստ դիմացկուն թուղթ։—**Կազմը**՝ կաշեպատ տախտակ, որ ժամանակին ունեցել է երկու բռնիչներ, որոնք հետագայում ընկել են սակայն։—**Պահպանակներ**՝ սկզբում ժամանակին եղել է երկու թերթ մագաղաթ, որոնք հետագայում կտրատվել են չարագործ մի ձեռքի կողմից։ Այժմ մնում է մի փոքրիկ կտոր 15 սմ. երկայնքով և 2—4 սմ. լայնքով։ Վրան կարդացվում է 4—5 բառեր միայն. գրված միջին երկաթագրով։—**Վիճակը**՝ լավ։—**Գրությունը**՝ միասյուն։—**Դատարկ թղթեր**՝ չկան։—**Տողերը**՝ 21։—**Գծումները**՝ ճնշումով։—**Գիրը**՝ նոտրգիր։—**Զարդագրություն**՝ ձեռագիրն ունի մի հատ հասարակ կիսախորան և մի հատ էլ հասարակ զարդագիր (թ. 1ա)։—**Գրիչը**՝ Տիվրիկեցի Պետրոս քահանա։—**Պատվիրատու**՝ Ալեքսանոս վարդապետ։—**Ծաղկողը**՝ շատ հավանաբար նույն ինքը ձեռագրի գրիչը՝ Պետրոս քահանան։—**Ժամանակը**՝ 1621 թ.։—**Վայրը**՝ Սուրբ Նշան Եկեղեցի (հավանաբար Տիվրիկի—Արևմտահայաստան)։—**Ծանոթություն**՝ Վեհափառ Հայրապետի միջոցավ ձեռագիրը ստացված է Ավեր Բուխարեստի բնակիչ պրն. Զարեհ Գույումջյանից 1965 թ. հունիսի 26-ին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիր մատյանը ունի 166 զանազան առակներ։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 115բ.—Յիշատակ է առակաց գիրքս տիպրիկեցի Պետրոս իրիցուն և իւր ծնաւղացն, հաւրն Յովանէսին և մաւրն Զըմրութին, և իւր իրիցակնոջն՝ Կեռաէ, և իւր որդոյն Պօղոս սարկաւագին զփոխեցեալն առ Քրիստոս, և քաջ րաբունապետին հաւրեղբայրն իմ զՀարապետ վարդապետն, որ եղաք յիշատակ ի ձեռն Ալէքսանոս վարդապետին։
Թ. 116ա.—Փառք անբաժանելի և միաւնական Սուրբ Երրորդութեան Հաւր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ յաւիտեանս ամեն։
Արդ գրեցաւ առակաց գիրքս ընթերձում ուսումնասէր մանկանց զի ասացեալ է սայ առն աստուածաբանի և տիեզերալոյսնչակ եռամեծին և երիցս երանեալ Նազեզի բարունոն և քաջ փազերային Վարդանայ։ Զի հոգոյ և մարմնոյ շահ և օգուտ է ընթերձողացն։ Արդ յերես անկեալ աղաչեմ զմիրողդ քանի և զորդորեալքդ ի նախանձ բարի յիշեցիք զՊետրոս

երէցս զոփարինցի որ զառակաց գիրքս գրեցի զի ուսանիցին և զիս յիշեսցեն:

Գրեցաւ գրկունքս թվին հայոց ՌՀԹ (1621 թ.) յուլիս ամսոյ ԻԲ, աւրն շաբաթ:

Դարձեալ աղաչեմ զձեզ մանկունք Սուրբ Եկեղեցոյ զի կաթիլ մի յաղաւթից ձերոց իջցէ յոսկերս իմ և լուասցէ զբազմայզարաւ վերս հոգւոյ (թ. 116բ) և մարմնոյ իմոյ և ծնաւղացն իմ և ընդանացս և զաւակաց իմ, և զեղբարցն իմ, և զքուերցն իմ զնեռելին և զմահացուն, ամէն:

Դարձեալ յիշեսցիք զորդեակն իմ զՊողոս սարկաւագն, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս և բազում սուգ եթող մեզ:

Գրեցաւ ձեռամբ անարժան Պետրոս իրիցուս, որ յոյժ աշխատեցայ յայսմ տառիս ի դրան Սուրբ Նշանիս Տէր Պետրոս խուռնաւեցցի, որ գրեցի յայրի անենիս մաղձանքն շատ էր աղքատիս: Ով որ յիշէ զանարժանս ինքն յիշեալ եղիցի Քրիստոսի միւսանգամ գալստեանն ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի ներսից կպցված է)

Եղբարք Տիրան և Զարեհ Գոչումեանի կողմէ, իրենց հօրմէն մնացած նորկայ ձեռագիր գիրքը կը նուիրէն Ս. Էջմիածնի Մատենադարանին:

Պուքրէշ, 26 Յունիս 1965: Զարեհ Գոչումեան:

Zareh Cociumian -Bd. Republicii 205
Bucarest -Telef. 752913

Թ. 58ա.—(Կա էլիպսաձև մի կնիք 5.8 սմ. երկայնքով և 2.9 սմ. լայնքով, որի վրա ռումիներեն և հայերեն գրված է հետևյալը).

Biblioteca Centrala Armeana, Bucuresti 1927

Պուքրէշ—Ռումանահայ Կեդր. Մատենադարան:

(Նույն կնիքը կա նաև 81բ և 116բ թերթերում):

Թ.թ. 88բ և 116բ.—(Գրչափորձեր):

Թ. 115ա.—Ես դաղանչեցի ես Յօվանանէսս:

№ 296

ԿՈՆԴԱԿԱՑ ԳԻՐՔ

Թերթերը՝ 165 (1—153 մատյանի հիմնական թերթերն են, իսկ 154—165 թերթերը ավելացված են հետագայում):—**Պրակները**՝ յուրաքանչյուրը 12-ական թերթից:—**Մեծությունը**՝ 34.4×21.8×2.5 սմ.:—**Նյութը**՝ մաքուր սպիտակ դիմացկուն թուղթ:—**Կազմը**՝ հաստ ստվարաթուղթ, որի վրա կողքին տպված է 1875 թվականը:—**Պահպանակները**՝ սկզբից երկու թերթ մաքուր սպիտակ դիմացկուն թուղթ:—**Վիճակը**՝ լավ:—**Գրությունը**՝ միասյուն:—**Դատարկ թերթերը**՝ 1ա—2բ, 161բ—166բ:—**Տողերը**՝ անկանոն, 30—37:—**Գծումները**՝ առանց ճնշումի, աչքի չափով:—**Գիրը**՝ շեղագիր:—**Զարդագրություն**՝ չունի: Միայն թղթի վերևի մասի ձախակողմյան անկյունում կա մի փոքրիկ կնիք, ոչ թանաքով, այլ ճնշումով, 1.8×1.7 սմ. չափերով, որի վրա գրված է թղթի գործարանի անունը՝ Фабрики Сергьева № 4:—**Գրիչը**՝ շատ հավանաբար Մայր Աթոռի Դիվանատան քարտուղարը:—**Պատվիրատուն**՝ Գևորգ Դ. Ամենայն Հայոց կաթողիկոսը:—**Ժամանակը**՝ 1875 թ.:—**Վայրը**՝ Ս. Էջմիածնի վանք:—**Մանրություն**՝ սույն ձեռագիրը ստացված է հոգեշնորհ տ. Նարեկ վարդապետ Շաքարյանի ձեռամբ, հոգևոր ճեմարանի գրադարանից, 1965 թ. հունիսի 13-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ.թ. 3ա—143բ.—Գևորգ Դ. կաթողիկոսի 1875 թ. գրած 418 կարևոր կոնդակների և նամակների պատճենները, որոնց մի քանիսին, հետաքրքրության համար, տրվում են վերնագրերը:

Թ. 6բ.—Կոնդակ Ներսէս արք. եպս.-ի Պատրիարքի Կ. Պօլսոյ վասն համոզելոյ զՅակոբ Պէյն Տատեան զԿարապետ Էֆէնտին Փափազեան. ի մասին չամուսնանալոյ ընդ դստեր Կարապետի Փափազեանց:

Թ. 15ա.—Նամակ արքային Պիրմանիոյ վասն յայտնելոյ թէ ի հովւութիւն հայոց որք ընդ իշխանութեամբ նորա են գնասցէ արքեպիսկոպոսն վիճակին Հնդկաստանի և Ասպահանի:

Թ. 20ա.—Հեռագիր նախարարի ներքին գործոց ի Պետերբուրգ վասն առաջադրելոյ նահանգապետին Եկատարինոսլաւու թոյլատրել բանալ զդպրոց Նոր Նախիջևանու զփոխադրեալն ի Թէոդոսիայէ:

Թ. 30ա.—Կոնդակ Մակար արքեպիսկոպոսի առաջնորդի վիճակին հայոց Վրաստանի վասն հաստատելոյ զՀոփսիմէ Բէգթաբէգեանց ի պաշտօն մայրապետութեան, ի տեղի հանգուցեալ Գայիանեայ Բէհբուտեանց են:

Թ. 35բ.—Կոնդակ Սինոդի Սրբոյ Էջմիածնի վասն զարժանն տնօրինել իրեղինաց և ստացուածոց Ամսթերտամ եկեղեցւոյն:

Թ. 62բ.—Կոնդակ Սինոդի Սրբոյ Էջմիածնի վասն պատուիրելոյ հոգևորականաց ըստ նախնական կանոնաց վարել:

Թ. 78բ.—Նախագիծ կանոնաց յաղագս կառավարութեան տպարանի Ս. Էջմիածնի:

Թ. 95ա.—Կոնդակ Ներսեսի արքեպս.-ի Պատրիարքի հայոց Կ. Պօլսոյ վասն ստանալոյ մերոյ զթուղթսն քննութեան և զպատճէնս պէսպէս գրուածոց յաղագս Երեմիա և Մկրտիչ եպիսկոպոսաց, ի մասին ապօրինաւոր ձեռնադրութեանց նոցա:

Թ. 107բ.—Կանոնք թեմական դպրոցաց Հայաստանեայցս Եկեղեցւոյ եղելոց ի Ռուսաստան վասն հանրական սահմանաց:

Թ. 133բ.—Նամակ առ Կայսերական Բարձրութիւն ի Տփխիս, վասն մտանելոյն ՝ծպտեալ իմն եղանակաւ ի վանս Ս. Էջմիածնի Նաումովի՝ պաշտօնավարին կառավարութեան Բաժից նահանգին Երեւանայ և խորտակելոյն զդրունս մատանատն վանիցս յաղագս պատրաստելոյ մերոյ զօրի:

Թ. 138բ.—Նամակ առ Եպարգոսն պարսից ի Թէհրան, վասն զպարտ ու պատշաճ տնօրէնութիւնն առնել առ ի զառաջս առնելոյ նեղսակիր դրութեան հայոց վիճակին Ջուղայու յերեսաց բողոքական քարոզչաց և հարստահարութեան հարկապահանջից:

(Շարունակելի)